ՀՀ Կառավարության աոընթեր Պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչություն

ՀԿՀՀ՝ 23248304

ՀԾՀ՝ 1509650369

Էդիկ Խաչիկի Հակոբյան

անուն, ազգանուն, հայրանուն

ք. Երևան, Սարիթաղ 26 փ., 22 տ.

հաշվառման /բնակության/ հասցե

Հայտնում ենք Ձեզ, որ համաձայն ՀՀ ՊԵԿ մաքսային մարմինների կողմից ստացված տեղեկությունների՝ Ձեր կողմից 14.02.2021թ. ԵԱՏՄ անդամ պետությունից ՀՀ տարածք է ներմուծվել ՀՀ կառավարության 13.02.2020թ. թիվ 171-Ն որոշմամբ սահմանված ակնհայտ առևտրային չափաքանակը գերազանցող ապրանքատեսակ:

Համաձայն <<Մաքսային կարգավորման մասին>> ՀՀ օրենքի 249 հոդվածի 6-րդ մասի՝ վերոնշյալ գործարքը հանդիսանում է ձեռնարկատիրական գործունեության նպատակով իրականացվող ներմուծում. համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ Օրենսգիրք) 59-րդ հոդվածի 6-րդ մասի՝ անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձինք ձեռնարկատիրական գործունեության նպատակով իրականացվող ներմուծման գործարքի դեպքում պարտավոր են Օրենսգրքով սահմանված կարգով, չափով և ժամկետներում հաշվարկել և պետական բյուջե վճարել այդ գործառնություններից առաջացող ԱԱՀ-ի գումարները:

Համաձայն հարկային վարչարարության ընթացքում հարկային իրավախախտում հայտնաբերելուց անմիջապես հետո հարկային մարմնի պատասխանատու պաշտոնատար անձի կողմից 15.06.2021թ. կազմված թիվ 31418/2021/ԿՈՒՎ4/Ա արձանագրության՝ Ձեր կողմից չկատարած հարկային պարտավորությունը 15.06.2021թ. դրությամբ կազմել է 116.574 դրամ, որից հարկ՝ 112.784 դրամ, տույժ՝ 3.790 դրամ:

Տեղեկացնում ենք, որ համաձայն <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> կետի՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչությունում հարուցվել է վարչական վարույթ՝ չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված վարչական ակտ ընդունելու նպատակով:

Նշված հարկային պարտավորությունները սահմանված ժամկետում չկատարելու դեպքի առթիվ, ի կատարումն <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 35-րդ և 38-րդ հոդվածներով վարչական մարմնին վերապահված պարտականությունների՝ առաջարկում ենք սույն ծանուցումը ստանալուն հաջորդող 3-րդ աշխատանքային օրը, ժամը 11-ին ներկայանալ վարչական վարույթի նախնական լսումներին, կամ մինչև նույն ժամկետը ներկայացնել վերը նշվածի վերաբերյալ Ձեր գրավոր բացատրությունը և/կամ առարկությունը հետևյալ հասցեով՝ ք. Երևան Ս. Դավթի 87 ա: Չներկայանալու դեպքում գործը կարող է քննվել Ձեր բացակայությամբ:

ՀՀ ՊԵԿ ԻՎ ՀԳ և ՊԿԱ բաժնի առաջատար մասնագետ՝
հեռ.՝ 011-54-91-91/91-68/

Digitally signed by *Լ. Ջաղացպանյան*

30/Հլս/2021